

Ա.ԶԱ.Տ ՕՐԴՈՒԽԱՆՑԱՆՑԱՆ. Գերմանիայի հայ ակադեմիականների միության տարեցիր. Jahrbuch des Armenisch-Akademischen Vereins – 1860 (2001-2002). Երևան, «Զանգակ-97» հրատ., 2002, 260 էջ:

Ավելացնելով այս գաղթօջախների կյանքում տարեգրքերի հրատարակումը ինքնակաղմակերպման և ինքնապահպանման հրատապ, ինչպես նաև պատմագիտական և մշակութաբանական կարերը դեր ու նշանակություն ունեցող իրողություն է: Օտարության մեջ ազգային ինքնության պահպանման այդ մղումով է, որ գերմանաբնակ մեր հայրենակից, երիտասարդ պատմադետ Ազատ Օրդուխանյանը հրատարակել է «Գերմանիայի հայ ակադեմիականների միության տարեգրք (2001–2002)» հատուրը:

Ա. Օրգուխանյանը Գերմանիայի Բոխում քաղաքի Ռուրի համալսարանի (Հյուս-Հռենոսյան Վեստֆալիա երկրամաս) պատմության ֆակուլտետի Արևելյան եվրոպայի երկրների նոր և նորագույն պատմության ամբիոնի դոկտորանտ է: Նրա դիտական թեման է «Հայերը երկրորդ համաշխարհային պատերազմի ժամանակ և ռազմագերիների հետագա ճակատագրիը պատերազմից հետո» (գիտական զեկավար՝ դոկտոր, պրոֆեսոր Բերնգ Բոնվել): Երիտասարդ պատմաբանն իր գիտական ուսումնական մասնակցություններին զուգընթաց եռանդուն մասնակցություն է ունենում գերմանահայ համայնքի հասարակական-մշակության կյանքին, հանդես դալիս պատմագիտական գասահոսություններով և հրապարակախոսական ելույթներով: Նա նաև 2001 թ. Բոխումում վերաբացված «Հայ ակադեմիականների միություն-1860» (ՀԱՄ) ուսումնամշակության կազմակերպության հիմնադիր-նախագահն է: Ահա այս միության 2001–2002 թթ. արդյունավոր գործունեությունը, ինչպես նաև Գերմանիայի հայ համայնքային և ուսանողական կյանքն է լուսաբանված Ա. Օրգուխանյանի հրատարակած համանուն երկ-

լեղվյա (հայերեն և գերմաներեն) ծրագրային տարեգրքում:

Հեղինակը, պատմագետի հեռատեսությամբ և անձնական սիրահոժար ջանքերով ստանձնելով սույն տարեգրքի ստեղծումը, ներածության մեջ նշում է, որ գերմանահայ բազմաշերտ ու բազմաբնույթ գաղութի պատմությունը տակավին խոր և համակողմանի ուսումնասիրության չի արժանացել, ուստի «...գաղութի անցյալի ու արդի վիճակի ուսումնասիրման գործը նախ և առաջ օրվա հրամայականի պես անհրաժեշտ է տեղի համայնքային, դիտամշակութային ու ազգային-հասարակական կյանքը կազմակերպական նոր որակի բերելու համար» (էջ 12):

Տարեգրքում Ա. Օրգուխանյանը պատմագետ-հետազոտողին հատուկ խնամքով ներկայացրել է Գերմանիայի հայ գաղութի ձևավորման ու զարդացման պատմական ուրվագիծը՝ 7 որոշակի լրջափուլերով. X-XI դդ. – XIX դ. կես, XIX դ. կես – 1915 թ., 1915–1939 թթ., 1939–1945 թթ., 1945 թ. – 1950-ական թվականների սկիզբ, 1950-ական թվականների սկիզբ – 1960-ական թվականների կես, 1960-ական թվականների կես – 1990-ական թվականների վերջ (էջ 19–20): Պատմական այս ժամանակագրությունը ներառում է տարբեր զբաղմունքների տեր հայ առաջին պանդուխտ անհատների և ընտանիքների, ապա՝ ուսանողների, տնտեսական ու քաղաքական հետապնդումների ենթարկված տարագիրների, Հայոց ցեղասպանությունից մազապուրծ գաղթականների, Հայաստանի խորհրդայնացման հետևանքով վտարանդվածների, Երկրորդ աշխարհամարտի ու զամագերիների և Հայրենազուրկ հայերի, ինչպես նաև Թուրքիայից, Իրանից, Մերձավոր Արևելքի երկրներից, իսկ վերջերս նաև Հայաստանից և նախկին Խորհրդային Միության հանրա-

պետություններից արտագաղթած հայերի հոսքը գեղի Գերմանիա: Ներկայումս ամբողջ Արևմտյան, Հյուսիսային և Հարավային Եվրոպայի երկրների հայ գաղութների շարքում Գերմանիայի հայությունն իր 35000–40000 թվաքանակով Ֆրանսիայի հայ գաղութից հետո զբաղեցնում է երկրորդ տեղը:

Ա. Օրդուխանյանը գաղութագիտական, սոցիոլոգիական և էթնոհոգեբանական հանգամանալից քննության ենթարկելով Գերմանիայի ժամանակակից հայ գաղութը, եղրակացրել է, որ այն, որպես վերջին տասնամյակների միգրացիոն գործընթացների հետևանքով արդեն իսկ ձևավորված գաղութը, թեպետ կրում է Եվրոպական հայ գաղութների համաման զարգացման ընթացք, «...այնուամենայիկ իր ձևավորման ուղու տարրեր եկէջներում արձանագրում է նաև բավականին մեծ տարրերություններ, որոնք, ի շարս այլ առանձնահատուկ զարգացումների, սերտորեն առնչվում են նաև գերմանահայ ուսանողություն կոչվող հետաքրքիր երևույթի հետ», ընդ որում «Գերմանիայում հայ ուսանողության ներկա պատկերը հար և նման է գերմանահայ գաղութի ընդհանուր պատկերին...» (էջ 19, 21–22):

Ի տարբերություն ԱՄՆ-ի, Մերձավորության Արևելքի և Սփյուռքի այլ հայացատ գաղութների, Գերմանիայի հայերը, այդ թվում նաև ուսանողները, համախմբված տեղաբաշխում չունեն, այլ տարածված են երկրի տարրեր քաղաքներում ու ավաններում: Հետեւքար դժվար է ոչ միայն նրանց համախմբելն ու միություններ կազմակերպելը, այլ նաև Գերմանիայում ապրող հայերի և մասնավորապես հայ ուսանողության թվի վերաբերյալ ճշգրիտ վիճակագրություն ունենալը: Նախնական տվյալներով ներկայումս Գերմանիայի 200-ից ավելի բարձրագույն ուսումնական հաստատություններում սովորում են տարրեր երկրներից ժամանած ավելի քան 750–800 հայ ուսանող և դոկտորանտ (ասպիրանտ), իսկ նրանց առավելագույն համախմբումը այս կամ այն համալսարանում կազմում է 20–25 անձ (էջ 22):

Թվաքանակի սակագության, ընդարձակ գերմանիայով մեկ տարածված լինելու, ինչպես նաև հայ երիտասարդի անհատապշտական բնագործության ու լեզվամտածողության ուրույն մշակույթներ ներկայացնելու հանգամանքները օբյեկտիվ և սուբյեկտիվ դժվարություններ են ստեղծում երկրի հայ մտավորականության համախմբման համար: Հեղինակը հայ մտավորական երիտասարդության կազմակերպման դժվարություններից է համարում նաև Հայաստանից և նախկին Խորհրդային Միության հանրապետություններից եկած հայ ուսանողության նվազ հակվածությունը համայնքային կամ ազգային-հասարակական կառույցներ ստեղծելուն, քանի որ ի տարբերություն Սփյուռքի իրենց արևմտահայ տարբեկցների, որոնք տակավին մանկապատասխան տարիներից արդեն ակումբահամայնքային կյանքի դպրոց են անցել՝ մասնակցելով ազգային, համայնքային, կուսակցական համապատասխան կառույցների աշխատանքներին, արևելահայ երիտասարդությունը գերազանցապես զուրկ է եղել համայնքային կամ հասարակական կառույցներում աշխատելու փորձառությունից:

Կազմակերպմանը խոչընդոտող հանգամանքներից են նաև գերմանական համալսարանական համակարգի աշխատահագրականորեն ոչ կենտրոնացած լինելը և ուսանող-երիտասարդության հարաշարժ լինելը: Բացի այդ, Գերմանիայում գործող հայկական կազմակերպությունները, համայնքային ու եկեղեցական կառույցները, հակառակ յութական հնարավորությունների առկայության, չունեն ուսանող երիտասարդական շարժմանը նպաստող ծրագրեր: Բացառություն են կազմում Գերմանահայոց կենտրոնական խորհուրդը և Քյոլնի Սիլվա Կապուտիլյանի անվան Տիկնանց միությունը, որոնք համագործակցում, բարոյապես ու նյութապես աջակցում ու հոգանակորում են Հայ ակադեմիականների միությանը (էջ 27–28): Այս առումով Հեղինակն համար այսօր օդի պես անհրաժեշտ է հայ ուսանողներին և երիտասարդ մտավորականներին աջակցելը և նրանց դեռևս

միակ միավորմանը՝ ՀԱՄ-ին, զարկ տալը, այլապես վաղը...առանց կազմակերպված ներուժի, գաղութը չի ունենա իր դույատևման ամենակարեսոր երաշխիքը հայ համայնքային մտավորականությունը, որը գերմանահայության ուժացման դեմ պայքարի առաջին պատճեղը պիտի լինի: Այդ իսկ պատճառով գաղութային կազմակերպություններն օր առաջ պետք է ձեռնարկեն ուսանողության կազմակերպման, նրանց բազմակողմանի աջակցության և ներգաղութային կյանքում ուսանողության ակտիվության բարձրացման ուղղությամբ երկարաժեք ծրագրերի մշակման աշխատանքները» (էջ 28):

Հեղինակը ժամանակագրական վերլուծությամբ ներկայացնում է Գերմանիայում հայ ուսանողության անցած ուղղու պատճական ուրվագիծը սկսած XIX դ. կեսից մինչև ներկա ժամանակները, և նշում է, որ գեռևս 1860-ական թվականներին Գերմանիայում ուսանող հայ երիտասարդների կողմից միավորվելու առաջին փորձերն են կատարվել: Եթե XIX դ. երկրորդ կեսին և XX դ. առաջին քառորդին հայ երիտասարդները նախընտրում էին ուսանել հիմնականում Գերմանիայի Լայպցի, Բեռլին, ենա, Հայլե, Դրեզդեն, Մյունիսեն, Մարբուրգ և Հայդելբերգ քաղաքների համալսարաններում, ապա այժմ երկրի գրեթե բոլոր համալսարաններում կան հայ ուսանողների զգալի (Բեռլին, Բոխում, Մյունիսեն, Ֆրանկֆուրտ, Քյոլն, Համբուրգ, Լյուբեկ) և հետզհետե ստվարացող (Ախեն, Ֆրայբուրգ, Թրիբեր, Հանովեր, Մարբուրգ) համախմբումներ, սակայն այլևս բացակայում է նախկին նման մի քանի կրթօջախներում ուսանելուն նախապատվություն տալու ավանդույթը (էջ 30-31):

Միաժամանակ, եթե XIX դ. երկրորդ կեսին և XX դ. սկզբին Գերմանիա ուսանելու էին մեկնում հիմնականում ուսուսական կայսրությունում բնակվող արևելահայերը (Շուշի, Թիֆլիս, Բաքու, Նոր Նախիջևան, Երևան, Շամախ, Ախալքալաք-Ախալցխա, Արդին և այլն) և սակավաթիվ էին Օսմանյան կայսրությունից ժամանած արևմտահայերը (Կ. Պոլիս, Էրգրում, Վան և այլն), ապա 1920-1950 թթ. դագարին հա-

ջորդած ժամանակաշրջանում ընդհուպ մինչև մեր օրերը, ակտիվացել է սփյուռքահայ տարբեր գաղթախմբներից (Պարսկաստան, Սիրիա, Լիբանան, Թուրքիա, ԱՄՆ, Ֆրանսիա, Հունաստան, Բուլղարիա, Իրաք և այլն), ինչպես նաև նախկին Խորհրդային Հայաստանից և ԽՍՀՄ տարբեր հանրապետություններից հիմնականում դեպի նախկին Գերմանիայի Դեմոկրատական Հանրապետություն հայության մեջ ապա հատկապես 1990-ական թվականներից սկսած, Հայաստանի Հանրապետությունից դեպի միացյալ Գերմանիա ուսանելու մեկնող հայ երիտասարդների հոսքը: Այսպես որ, այսօր Գերմանիայում ուսանող հայ երիտասարդությունն իրենից ներկայացնում է բազմաշերտ հավաքականություն, որը, ըստ Հեղինակի, «...բնորոշվում է, ոչ միայն նրա աշխարհագրական գործոնով, այլ շատ հաճախ նաև դրանով պայմանավորված աշխարհայացքային և լեզվամտածողության, տարբեր երկրներում ձեռք բերած սոցիալ-քաղաքական կողմնորոշմամբ և իրենց վրա կրող իրարից լրիվ տարբեր մշակութային ազգեցություններով: Այդ հստակ արտահայտված տարբերությունները, մի կողմից, հարստացնում են գերմանահայ ուսանողություն կոչվող ընդհանուր երեսույթը, մյուս կողմից՝ չափանց դժվարացնում նրա կազմակերպչական կառույցների ստեղծման ու համատեղ աշխատանքների գործը» (էջ 33):

Վերջին 20-25 տարիների ընթացքում հայկական Սփյուռք ունեցող որոշ երկրներից եւ Հայաստանից դեպի Գերմանիա շարունակվող արտագաղթի արդյունքում իր վերջնական ձևագործման հանդրվանին հասած գերմանահայ գաղութում նկատելի է դարձել գերմանահայ մասնագիտական կառույցների կազմակորումը: 2001 թ. հոնվարի 7-ին Բոխումի Հառուս Միխայել կաթոլիկ եկեղեցու իրավասության տակ դտնվող ուսանողական հանրակացարանում վերաբացված Գերմանիայի «Հայ ակադեմիականների միություն-1860» դիտառուսումնամշակութային կազմակերպությունն այժմ գերմանահայ կազմակերպությունների մեջ դարձել է ամենաբազմանդամներից ու ամենագործունյաներից մեկը: ՀԱՄ-ը, որպես 1860 թ. Գերմանիայում (Լայպցիգ) գործած

և երբեմնի աշխույժ ուսանողական-ակադեմիական կյանք ունեցող (Գերմանիայում են ուսանել Գրիգոր և Անգրես Արծրունի եղբայրները, Կոմիտասը, Ավետիք Խոհանոց, Մանուկ Արեգյանը, Կարապետ Մելք-Օչանջանյանը և այլոք) համանուն միության իրավահաջորդ, նպատակ ունի «... զերակենդանացնել գերմանահայ ուսանողության պատմական հարուստ ավանդույթները և փորձել հնարավորին չափ կազմակերպել Հայ ուսանողության և երիտասարդ մտավորականների ստեղծագործական և Հասարակական կյանքը Գերմանիայում» (էջ 221): Միությունը ձգտում է ակադեմիական հենքի վրա միավորել գերմանահայ ուսանողներին, ինչպես նաև երիտասարդ մտավորականներին, որպեսզի համատեղ աշխատանքի ընթացքում հնարավոր լինի ապահով հիմքերի վրա պահպատ իրար հաջորդող սերունդների գործունեությունը «պահպանելու համար երեկվա և այսօրվա Հայ ուսանողության կապը» (էջ 131), ինչպես նաև նրանց կարողություններն ու հնարավորություններն ու համարական համար գործականացնելու համար գերմանահայ գաղութի համախմբմանը, ազգային-Հասարակական, գիտամշակութային կյանքի զարգացմանն ու Հայ-գերմանական բարեկամական հարաբերությունների ավելի ընդլայնմանն ու խորացմանը (էջ 44): ՀԱՄ-ը կոչված է աշխուժացնելու Հայաստանի և Սփյուռքի Հայ ուսանողների ու գիտականների համադրակցությունը դերմանական կրթօջախների և գիտական հաստատությունների հետ, որպեսզի ավելի մեծ թվով ուսանողներ և գիտնականներ կարողանան իրենց գիտելիքները խորացնել գերմանական բուհերում: Միությունն իր գործունեության կարեռագործյան խնդիրներից մեկն է համարում նաև լայնակի կապերի հաստատումը Գերմանիայի գիտառուսումնական և մշակութային համակարգի տարրեր կառույցների հետ՝ դառնալով կապող ողակ Գերմանիայի և Հայաստանի համապատասխան հաստատությունների միջև: ՀԱՄ հասարակական գործունեության մշտական ծրագրերից է հոփումի նուրի համալսարանին կից կաթոլիկ կենտրոնում գործող Հայկական թեքումով մեկորյադպրոցը (ուսուցիչ՝ Ա. Օրդուխսանյան): Այն

բացվել է 2000 թ. հոկտեմբերի 2-ին և ոչ հայաշատ այդ համայնքում (ի տարրերություն հայանած Քյոլն, Մայնի Ֆրանկֆուրտ, Բեռլին քաղաքների) կարեոր ազգապահպան առաքելություն է իրականացնում: Այստեղ ցածր դասարանում դասավանդվում է հայերեն գրել, կարդալ, իսկ բարձր դասարանում հայոց պատմություն. Հայ գրականություն, Հայաստանի աշխարհագրություն:

Նորաստեղծ ՀԱՄ-ը հաֆուլթյամբ իրականացնում է ուսումնամշակութային միջոցառումների մի ամբողջ շարք. միությունն արձագանքում է համազգային գրեթե բոլոր ձեռնարկներին, կազմակերպում Սփյուռքի, Հայրենիքի և օտարազգի մտավորականների ու մշակույթի գործիչների հետ հանդիպումներ և այլն:

Տարեգիրքը ներառում է նաև ՀԱՄ միջոցառումների շրջաբերականներ. հայտագրեր, հիշարժան լուսանկարներ, միության գործունեությունը լուսաբանող պաշտոնական փաստաթղթեր ու նամակագրություն, մամուլի արձագանքներ, միության անդամների կենսագրական բառարան, ինչպես նաև գիտական սկզբունքով կազմված անձնանունների, աեղանունների, համալսարանական և գիտական հաստատությունների, միությունների ու կազմակերպությունների ծանոթագրական անվանացանկեր: Տարեգիրքը լույս է տեսել Գերմանիայի Հայ տիկինաց միության նյութական աշակեցությամբ: Գերմանիայի Հայ ակադեմիականների միության ամենամյա գործունեությունը լուսաբանող տարեգրքից բացի ՀԱՄ-ը սկսել է Հրատարակել նաև միության շնորհալի անդամների ստեղծագործությունները սերկայացնող պարբերական մատենաշար:

Ա. Օրդուխսանյանի հեղինակությամբ լույս տեսած «Գերմանիայի Հայ ակադեմիականների միության տարեգիրքը» արժեքավոր ներդրում է հետզհետե հայաշատ դարձող եվրոպական այդ գաղութի, որպես արդի Սփյուռքի մի հատվածի ներհամայնքային կյանքն առարկայորեն լուսաբանելու և պատմական ընդհանուր ուրվագիծը ներկայացնելու, օտար ափերում ազգային ինքնության բացահայտման ու պահպան-

ման ուղղությամբ, ինչպես նաև Հայաստան-Սփյուռք հարաբերությունները համատական վերլուծության ննթարկելու և պատմաքաղաքական եզրահանգումներ կատարելու առումով։ Այնպես որ, տարեգիրքն իր համայնքագիտական ընդունով հավասարապես կհետաքրքի ինչպես գերմանահայությանը, նույնպես և Հայաստանի ու արտերկրի մեր սփյուռքագետ պատմաբաններին ու քաղաքագետներին։

Սույն տարեգիրքը գործնականից բացի ունի նաև պատմագիտական և սկզբնաղբյուրային բացառիկ արժեք ու նշանակություն, մասնավոր եթե սփյուռքահայ որոշ գաղթօջախներում լույս տեսնող համանման հրատարակությունների նման իր է-

ջերում ավելի ընդարձակ ներկայացնի գերմանահայոց պատմությանն առնչվող փաստագիտագրական նյութեր՝ լրացնելով այդ ասպարեզում մինչ օրս առկա բացը։ Հուսանք, որ Գերմանիայի հայ համայնքը։ Հանձինս խոստումնալից պատմագետ Ազատ Օրգուխանյանի, կգտնի իր հուսալի ու նվիրյալ հետազոտողին։ Իսկ նրա զեկավարած Գերմանիայի հայ ակագեմիականների միությունը կզորանա և կդառնա համայնքը համախմբող այն մտավոր ներուժը, որը ձուլման ու օտարացման համայնակուլ միջավայրում իր գործունեությամբ և հրատարակություններով կշարունակի իրականացնել հայապահպան ու ազգասիրական օրինակելի առաքելություն։

ՔԱՐԱՐԻԿ ԱՎԱԳԹԱՆ